ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքները /2016-17 ուստարի, առկա/

Այդ արդյունքների և **2011-12, 2013-14, 2015-16** ուստարիների առկա ուսուցման շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքների

<u>համեմատական վերլուծությունը</u>

Ուսումնառության կազմակերպման և կրթօջախի կառավարման ամենատարբեր հիմնախնդիրներին նվիրված հասարակական կարծիքի հարցումները ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տարեց-տարի էլ ավելի են ընկալվում որպես բնականոն երևույթ, աշխատանքային հարաբերությունների կատարելագործման գիտականորեն հիմնավորված գործոն: 2011 թվականից անցկացվող հարցումների օգտակարության հանդեպ ներքին ու արտաքին շահակիցների վստահությունն օրավուր ուղի է հարթում մասնակի թերահավատությունների, սուբյեկտիվ հակադարձումների միջով: Այն պայմանավորված է մի շարք գործոններով:

Նախ, էական է այն հանգամանքը, որ նման հարցումների պատվիրատուն և գործնականում կիրառելի արդյունքների պահանջատերը մասնաճյուղի ղեկավարությունն է: Տնօրենությունը յուրաքանչյուր հարցման արդյունք, մի կողմից դարձնելով շահախնդիր քննարկման առարկա և հնարավորինս հաշվի առնելով կառավարչական խնդիրների լուծման մեջ, մյուս կողմից արդարացիորեն պահանջել է կազմակերպիչներից զուգահեռաբար կատարելագործել ուսումնասիրությունների մասնագիտական հիմնավորվածությունը, ստանալ ավելի բազմակողմանի ու հավաստի տվյալներ:

Երկրորդ կարևոր գործոնը «Կրթական ծրագրի ղեկավար»-ի ինստիտուտի կայացման անհրաժեշտությունն է: Նրանից բխում են այնպիսի խնդիրներ (բուհ-գործատու, դասախոս-ուսանող, ղեկավար-ենթակա կապերի կատարելագործում), որոնց լուծման մեջ շահախնդիր կողմերի գիտականորեն հիմնավորված կարծիք-գնահատականների իմացությունը դառնում է պարտադիր պայմաններից մեկը:

Երրորդ գործոնը, թերևս, անզեն աչքով դժվար նկատելի, հարցումների հանդեպ մշակույթի ձեռքբերումն է: Տարեց-տարի անցկացվող հարցումների հանդեպ վստահությունը բնականորեն մեծանում է, քանի որ մասնաճյուղի հանրությունը, հատկապես ուսանողությունն արդեն իրազեկված են, ինչ-որ տեղ սպասում են հարցումներին, որպեսզի կարողանան արտահայտել իրենց տեսակետը հուզող խնդիրների վերաբերյալ: Ով կամենում, նկատում է այն փոփոխությունները (թեկուզև փոքր կամ դժվար նշմարելի), որոնք կատարվել են իրենց նկատառումների և առաջարկությունների համատեքստում, և, որ ամենակարևորն է, ոչ ոք «չի տուժում (վնասվում)» անձնական տեսակետն անկեղծորեն արտահայտելու համար: Միաժամանակ փաստենք, որ այստեղ դեռևս քիչ խնդիրներ չկան, կապված արդյունքների հավաստիության ու վստահելիության հետ:

Ասվածի համատեքստում առանձնակի ենք կարևորում շրջանավարտների հարցումը: Մասնակցելով քառամյա ուսուցման ու համալսարանական կյանքի իրադարձություններին, մյուսների համեմատ նրանք, բնականաբար, ավելի իրազեկ են: Մյուս կողմից, ուսանողի հոգեբանական այն մտահոգությունը, թե սեփական կարծիքն ու գնահատականն անկեղծ արտահայտելը կարող է «վնասել» իր ուսումնական շահերին, շրջանավարտների դեպքում

գրեթե գոյություն չունի: Ենթադրաբար նրանք արդեն «չեն վախենում» և համեմատաբար ավելի ազատորեն են արտահայտելու իրենց կարծիքներն ու գնահատականները:

Համաձայն մասնաճյուղի զարգացման 2016-20թթ. ռազմավարական ծրագրի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը պլանավորել էր ընթացիկ ուստարում նախապատրաստել և **առցանց եղանակով իրականացնել** ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումը /ՌԾ, գործողություն՝ 1.3.6/: Հետևաբար, համաձայն բաժնի աշխատանքային պլանի իրականացման, նաև ինֆորմացիայի հավաստիության մեծացման և ուսանողի պատասխանների վրա կողմնակի միջամտությունների կամ ազդեցությունների բացառման նպատակով ընթացիկ՝ 2016-17 ուստարվա շրջանավարտների հարցումն իրագործվեց **առցանց (on-line)** եղանակով: Այդ աշխատանքների իրականացմանն աջակցել է նաև մասնաճյուղի շրջանավարտների կարիերայի հարցերով զբաղվող պատասխանատուն: Ըստ նախապես մշակված ժամանակացույցի շրջանավարտներն ամփոփիչ ատեստավորումն ավարտելուց հետո համակարգչային սրահներում առցանց պատասխանել են հարցաշարով ամրագրված հարցերին, գրել են ուսումնառության վերաբերյալ իրենց կարծիքները, նշել առաջարկներ:

Կարևոր է ամրագրել այն փաստը, որ թեպետ ընթացիկ տարվա **առցանց** (այսինքն՝ ազատ) արդյունքները որոշ հարցերի առումով համամասնական չափով փոքր ինչ զիջում են նախորդ տարիների արդյունքներին, այդուհանդերձ դրանք իրապես արտահայտում են շրջանավարտների բավարարվածության աստիճանը, բացահայտում են առկա խնդիրները և մատնանշում են այն դրականն ու օգտակարը, որ մատուցում է մասնաճյուղն իր ուսանողներին:

Համառոտ ներկայացնենք հարցման ընդհանրական որոշ արդյունքներ, նաև այդ արդյունքների համեմատական վերլուծությունը նախորդ ուստարիների հարցումների արդյունքների հետ:

Ընթացիկ ուստարում առցանց տարբերակով մասնաճյուղի առկա ուսուցման **164 շրջանավարտից** հարցերին պատասխանել են **160-ը**:

Ուս. ձևը	Ընդամենը	Կ/Ա	ԻԿՄ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	ՖրԼ	ԱնգԼ	Սերվ	Տնտ
առկա	**164/160**	15/**15**	21/**21**	18/**17**	19/**19**	17/**17**	10/**10**	29/**28**	14/**14**	21/**19**

Առանձին գործոնները գնահատվել են 5 բալանի սանդղակով, որտեղ 5-ը ամենաբարձր, իսկ 2-ը՝ ամենացածր գնահատականներն են, 0-ն՝ դժվարանում են պատասխանել: Սխալանքն ընդունվել է 0,2 բալ:

Ըստ հարցման արդյունքների կրթական ծրագրի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից շրջանավարտների բավարարվածությունը տատանվում է «բարձր» և «շատ բարձր» գնահատականների միջև: Ամենաբարձրերը մասնագիտական կարողությունների ձեռքբերումն է (միջին գնահատականը՝ **4,52**) և տեսական գիտելիքների իմացությունը (միջին գնահատականը՝ **4,51**):

h/h	Ուսումնառությունը ԵՊՀ ԻՄ-ում որքանո՞վ է.	Միջ. գն.	Կ/Ա	ԻԿՄ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	ՖրԼ	ԱնգԼ	Սերվ	Տնտ
2.1	**նպաստել** մասնագիտական կարողությունների ձեռքբերմանը	**4,52**	4,33	4,14	4,65	4,63	4,82	4,60	4,50	4,71	4,42
2.2	**տալիս** տեսական գիտելիքներ	**4,51**	4,60	3,43	4,59	4,68	4,76	4,50	4,64	4,79	4,74
2.3	**տալիս** գործնական հմտություններ	**4,26**	4,40	3,56	4,75	4,42	4,71	4,50	4,39	4,07	3,63
2.5	ընդհանուր առմամբ **մատուցել** օգտակար դասընթացներ	**4,36**	4,00	3,76	4,44	4,58	4,59	4,60	4,48	4,50	4,42

Համեմատելու համար ասենք, որ 2011-12 ուս տարում անցկացված հարցումների հանդեպ նշված հատկանիշների մասով՝ մասնագիտական կարողությունների ձեռքբերում և տեսական գիտելիքներ, որակական առաջընթաց չի ամրագրվել, սակայն առկա է քանակական աճ (2011-12թթ. հարցման արդյունքը՝ **4,4**, իսկ 2017-ում՝ **4,5**):



Բարձր են գնահատվել նաև ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունը (միջին գնահատականը՝ **4,41**), պրակտիկաների օգտակարությունը **(4,39),** մատուցված դասընթացների օգտակարությունը (**4,36**), գնահատման օբյեկտիվությունը (**4,38**), գործնական հմտությունները (**4,26**):

h/h	Հարցի բովանդակությունը	Միջ. գն.	Կ/Ա	ԻԿՄ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	ՖրԼ	ԱնգԼ	Սերվ	Տնտ
2.6	Ինչպե՞ս եք գնահատում պրակտիկաների օգտակարությունը	**4,39**	4,07	3,33	4,47	4,68	4,65	4,60	4,54	4,36	4,53
2.7	Որքանո՞վ են բուհում օբյեկտիվ գնահատվել Ձեր գիտելիքները	**4,38**	4,25	4,35	4,42	4,34	4,35	4,52	4,39	4,43	4,33
2.8	Որքանո՞վ է օբյեկտիվ ամփոփիչ ատեստա-վորումը (ամփոփիչ քննություն, ավարտա-կան աշխատանքներ)	**4,41**	4,40	4,15	4,63	4,16	4,41	4,70	4,57	4,43	4,32

Այս շարքում համեմատաբար ամենացածրը ուսումնառության ընթացքում օտար լեզուների իմացությանը նպաստելու միջին գնահատականն է՝ **4,03**: Այս խնդրի հետ մասնաճյուղն առնչվում է անընդհատ, մի շարք մասնագիտությունների շրջանավարտներ մշտապես իրենց բավարարված չեն համարում: Հարկ է նշել, որ մասնաճյուղի համապատասխան ամբիոններում իրականացվել են համալիր միջոցառումներ օտար լեզվի ուսուցման մակարդակը բարձրացնելու համար, այդ խնդիրը մշտապես գտնվում է ղեկավարության ուշադրության կենտրոնում: Ստացվում է այնպես, որ որքան ուսանողներն ավելի շատ են գիտակցում օտար լեզուների լավ իմացության անհրաժեշտությունը, որքան ավելի շատ են առնչվում օտարալեզու գրականության հետ, որքան այդ դասընթացների շրջանակներում ավելացվում են ուսումնառության և յուրացման չափանիշները, այնքան ավելի են բարձրանում նրանց պահանջները դրա նկատմամբ, հետևաբար և նվազում է նրանց բավարարվածությունը:



Այստեղ մասնաճյուղը լուրջ խնդիրներ ունի:

ԵՊՀ ԻՄ ստացած իրենց <u>**կրթությունը**</u> 2016-17 ուստարվա շրջանավարտները գնահատել են **4,42 միջին միավորով**: Նշենք, որ նախորդ տարիների հարցումների արդյունքների հետ համեմատած այս հատկանիշների մասով ևս որակական փոփոխություններ չեն ամրագրվել: Սա իրավիճակի և շահախնդիր ուսանողության կողմից նրա գնահատման վիճակագրական օբյեկտիվության կողմնակի ապացույցներից է:



Մեջբերված տվյալներն ավելի «խոսուն» են դառնում, երբ ներկայացվում են բացարձակ թվերով: Այսպես, հարցված շրջանավարտների **92,4** %-ը մասնաճյուղում ստացած կրթությունը գնահատել են **«4»** և **«5»**:

հ/հ	Հարցմանը մասնակցած շրջանավարտների քանակը՝ 160	4 և 5 գնահատականներ	
		քանակը	%
2.1	***Ուսումնառությունը ԵՊՀ ԻՄ-ում որքանո՞վ է.*** նպաստել մասնագիտական կարողությունների ձեռքբերմանը	**151**	**94,4%**
2.2	տալիս տեսական գիտելիքներ	**143**	**89,4%**
2.3	տալիս գործնական հմտություններ	**124**	**79,5%**
2.4	նպաստել օտար լեզուների իմացությանը	**115**	**71,9%**
2.5	***Ընդհանուր առմամբ.*** որքանո՞վ էին օգտակար ԵՊՀ ԻՄ-ում մատուցվող դասընթացները	**142**	**89,9%**
6.1	ինչպե՞ս եք գնահատում ԵՊՀ ԻՄ-ում ստացած Ձեր կրթությունը	**146**	**92,4%**
2.6	Ինչպե՞ս եք գնահատում պրակտիկաների օգտակարությունը	**133**	**86,9%**
2.7	որքանո՞վ են բուհում օբյեկտիվ գնահատվել Ձեր գիտելիքները	**142**	**88,8%**
2.8	որքանո՞վ էր օբյեկտիվ ամփոփիչ ատեստավորումը (ամփոփիչ քննություն, ավարտական աշխատանքներ)	**143**	**90,5%**

Ինչպես երևում է այս աղյուսակից հարցմանը մասնակցած շրջանավարտների գրեթե 90%-ից ավելին բարձր՝ **«4»** և **«5»** գնահատականներով գնահատել են մասնագիտական կարողությունների ձեռքբերումը՝ **94,4%**-ը, ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունը՝ **90,5%**-ը, դասընթացների օգտակարությունը՝ **89,9%**-ը, տեսական գիտելիքները՝ **89,4**%-ը: Եթե հաշվի առնենք, որ հարցումներն առցանց էին և կաշկանդվածության խնդիր մասնակիցները չունեին, ապա իհարկե դրանք շատ լավ ցուցանիշներ են:

Պրակտիկաների օգտակարությունից բավարավածությանը, գիտելիքների գնահատման օբյեկտիվությանը, գործնական հմտություններին տրված 4 և 5 գնահատականները (համապատասխանաբար մասնակիցների **86,9%**, **88,8%, 79,5%)** իհարկե բավարարվածության շատ բարձր մակարդակը չեն, սակայն վատ էլ չէ, և դրանք բացում են այդ տիրույթներում նորովի մոտեցումներ փնտրելու, խնդիրները տեսնելու, ծագած խնդիրները հետագայում լուծելու միտումներ:

Այդպիսի գլոբալ խնդիր է օտար լեզուների իմացությանը նպաստելու մասնաճյուղի գործունեության ցածր գնահատականը, հարցման մասնակիցների միայն **71,9 %-ն** է մասնաճյուղի ներդրած ջանքերը գնահատել 4 և 5 գնահատականներով:

Այս ամենից սոցիալ-վիճակագրական հետևությունը մեկն է. կրթական ծրագրի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից՝ հատկապես մասնաճյուղում տեսական գիտելիքների, գործնական հմտությունների և մասնագիտական կարողությունների իրացման հարցում ***առկա են լուրջ ձեռքբերումներ***, ինչի արտահայտությունը վերջին հինգ տարվա շրջանավարտների գնահատականներն են: Միաժամանակ, գնահատականները հուշում են, որ զարգացումների ռեսուրսները սպառված չեն, հատկապես օտար լեզուների իմացության, որոշակի մարտավարական ու ռազմավարական խնդիրների համատեքստում:

Ընդհանուր շատ բարձր են նաև մասնաճյուղի ռեսուրսներից շրջանավարտների բավարարվածության գնահատականները: Այդ տվյալները նույնպես ներկայացնենք «բարձր» և «շատ բարձր», այսինքն 4 և 5 գնահատականներով իրենց բավարարվածությունն արտահայտած շրջանավարտների քանակային հարաբերակցությամբ, այսինքն տոկոսային արտահայտությամբ:

h/h	Բավարարվածությունը.	4 և 5 գնահատականներ	
		քանակը	%
3.1	Լսարանների վիճակից և կահավորանքից	138	86,3%
3.2	Համակարգչային սրահների մատչելիությունից	150	94,3%
3.2.1	Համակարգչային սրահների կահավորանքից	156	97,5%
3.3	Մասնաճյուղի համացանցի (ինտերնետի) մատչելիությունից	142	89,3%
3.3.1	Մասնաճյուղի համացանցի (ինտերնետի) արագությունից	137	86,2%
3.5	Ուսումնական լաբորատորիաների ժամանակակից սարքավո-րումներով հագեցվածության աստիճանից և կահավորանքից	125	78,6%

Այս տվյալները վկայում են, որ ղեկավարության ուշադրության կենտրոնում են համակարգչային սրահների կահավորումն ու նրանց մատչելիության ապահովումը, անվճար համացանցի մատչելիության ապահովումը, լսարանների լավ վիճակի ու նրանց անհրաժեշտ կահավորման ապահովումը, ինչի մասին շրջանավարտներն արտահայտել են իրենց բարձր բավարարվածությունը: Իհարկե, մասնաճյուղը խնդիր ունի ուսումնական լաբորատորիաները ժամանակակից սարքավորումներով հագեցնելու և կահավորելու հետ: Ակնհայտ է, որ ուսանողների նորովի պահանջմունքները բավարարելու համար անհրաժեշտ են զգալի նյութական միջոցներ, որոնց հնարավորությունները մասնաճյուղը ներկայումս չունի: Սակայն, մյուս կողմից, կատարվում են համապատասխան քայլեր և այդ հարցում կրթօջախին մշտապես աջակցում է մայր բուհը՝ ԵՊՀ-ն:

Արդյունքների համեմատական վերլուծությունը վկայում է, որ մեր շրջանավարտներն ըստ էության դժգոհ չեն լսարաններից, համակարգչային սրահներից, սակայն, բնականորեն ցանկանում են ունենալ էլ ավելին՝ ժամանակակից նոր տեղեկատվական տեխնոլոգիաներով, տեխնիկայով, սարքավորումներով, դիդակտիկ նյութերով հագեցած լսարաններ, համակարգչային սրահներ ու լաբորատորիաներ, ինչն ուշադրության է արժանի:

	Որքանով են շրջանավարտները բավարարված մասնաճյուղի.	2011-12	2013-14	2015-16	2016-17
3.1	լսարանների վիճակից և կահավորանքից	4,2	4,2	4,4	**4,3**
3.5	ուսումնական լաբորատորիաների ժամանակակից սարքավորումներով հագեցվածության աստիճանից և կահավորանքից	4,0	4,1	4,3	**4,2**
3.2	համակարգչային սրահների մատչելիությունից	4,5	4,4	4,6	**4,7**
3.3	համացանցի մատչելիությունից	4,4	4,4	4,5	**4,5**

Նույն համատեքստում շրջանավարտներն իրենց բավարարվածության աստիճանն են արտահայտել գրադարանի և ընթերցասրահների վերաբերյալ: Հարցման մասնակիցների 93,7%-ը 4 և 5 գնահատականներով է արտահայտել իր բավարարվածությունը գրադարանի և ընթերցասրահների վիճակից և կահավորանքից, **87,5%-ը** «շատ բարձր» և «բարձր» է գնահատել գրադարանի և ընթերցասրահների աշխատաժամերից ու սպասարկումից իրենց բավարարվածությունը, և իհարկե այդ ֆոնի վրա բավարարվածության **80,6%-ը** գրադարանում և ընթերցասրահներում տրամադրած ժամանակակից մասնագիտական գրականությունից դառնում է համեմատաբար ցածր գնահատական և այդ խնդիրն իր արտահայտումն ունի հաև նախորդ տարիների հարցումների արդյունքներում.



Շրջանավարտներն իրենց որոշակի անբավարարվածությունն են արտահայտել նաև ուսանողական կառույցների (ՈՒԽ, ՈՒԳԸ) և կարիերայի կենտրոնի աշխատանքներից, համապատասխանաբար գնահատելով **4,02 և 4,2** միջին գնահատականներով: Եվ սա այն դեպքում, երբ մասնաճյուղում առկա են բոլոր պայմանները, որոնք ուսանողների համար ապահովում են պատշաճ ուսումնական և գիտական միջավայր: Մասնավորաբար, ակտիվ գործում է **<u>ուսանողական խորհուրդը</u>**՝ ուսանողների համար կազմակերպելով տարբեր գիտամշակութային միջոցառումներ, հանդիպումներ, ճանաչողական այցեր, իրականացնում է նրանց ուսումնական կարիքների ուսումնասիրություններ և հետամուտ է լինում դրանց լուծմանը և այլն:





Ուսանողական գիտական ընկերությունը պարբերաբար կազմակերպում է գիտական զեկուցումների շարք, ապահովում է մասնաճյուղի ուսանողների մասնակցությունը տարբեր ուսանողական գիտաժողովների, և հարկ է փաստել, որ մասնաճյուղի շրջանավարտներն այդ գիտաժողովներում ներկայանում են բավականին պատրաստված ու հետաքրքիր նյութերով:

Տրված գնահատականը հուշում է, որ հարկ է բարձրացնել նմանօրինակ աշխատանքների մակարդակը, ավելի շատ ուսանողների ընդգրկել այդ աշխատանքներում, և, որ, պակաս կարևոր չէ՝ կատարվածը տեսանելի դարձնել հնարավորինս ավելի շատ ուսանողների:

Հետաքրքիր է, որ շրջանավարտները բավարարված են ուսանողների կարիքներին արձագանքելու մասնաճյուղի ստորաբաժանումների ջանքերից և ուսանողների դիմումներին և բողոքներին արձագանքելու ընթացակարգերի ու մեխանիզմների արդյունավետությունից.

h/h	Որքանո՞վ են.	Միջ. գն.	4 և 5 գն. (%)
4.2	արդյունավետ աշխատում ուսանողների դիմումներին և բողոքներին արձագանքելու ընթացակարգերը և մեխանիզմները	**4,37**	**86,6%**
4.3	բավարարվում ուսանողների կողմից վեր հանված կարիքները	**4,28**	**84,2%**

Այստեղ ևս հետևությունը մեկն է. մասնաճյուղի ռեսուրսները, որոնցից օգտվել են շրջանավարտները կրթության ընթացքում, հիմնականում լիարժեքորեն բավարարել են մասնագիտական գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ճանապարհին: Միաժամանակ, առանձին օղակներում (ուսանողական կառույցներ, մասնագիտական գրականությամբ ապահովում, լաբորատոր սարքավորումներով հագեցվածություն) պահանջվում են լրացուցիչ ջանքեր ուսանողների բավարարվածության օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտները հաղթահարելու ճանապարհին:

Անդրադառնանք նաև ուսումնառության լիարժեքությունը լրացնող կարևորագույն օղակներից շրջանավարտների բավարարվածության գնահատմանը: Պատկերը դառնում է ամբողջական և բնութագրող, երբ հարցման մասնակիցներն արտահայտում են իրենց վերաբերմունքը նաև այն մարդկանց նկատմամբ, ովքեր 4 տարի շարունակ եղել են նրանց կողքին, օգնել են հաղթահարել դժվարությունները, կողմնորոշվել գիտության նվաճումների մեջ, ապահով զգալ հասարակության մեջ և շրջապատում: Դա **մասնաճյուղի և ֆակուլտետների ղեկավարությունն է**, որոնք ամեն ինչ անում են իրենց ուսանողների բարձրորակ կրթությունը կազմակերպելու համար, և **պրոֆեսորադասախոսական անձնակազմն** է, որոնց շնորհիվ նրանք իրենց զգում են գիտելիքներով և մասնագիտական հմտություններով հարուստ ապագա մասնագետներ: Նրանց բարձր գնահատականները (միջին գնահատականը համապատասխանաբար՝ **4,60; 4,75; 4,71**) հիմնավորում են մասնաճյուղի պահանջվածությունը և ստեղծում տարածաշրջանում նրա համար բարձր հեղինակություն:

h/h	Որքանո՞վ եք գոհ.	Միջ. գն.	4 և 5 գն. (%)
4.1.1	ԵՊՀ ԻՄ-ի ղեկավարությունից	**4,70**	**93,8%**
4.1.2	ֆակուլտետի ղեկավարությունից	**4,75**	**96,2%**
4.1.3	պրոֆեսորադասախոսական կազմից	**4,71**	**97,5%**

Եվ ուրախությամբ պետք է փաստել, որ այդ գնահատականները կայուն են ու խոսուն.



Ամփոփելով հարցման արդյունքները վկայենք, որ մեր շրջանավարտներն ընդհանուր առմամբ գոհ են մասնաճյուղում ստացած իրենց կրթությունից.

h	Հարց.	Միջ. գն.	Կ/Ա	ԻԿՄ	ՀԼԳ	Մ/Հ	Պատմ	ՖրԼ	ԱնգԼ	Սերվ	Տնտ
6.1	Ընդհանուր առմամբ ինչպե՞ս եք գնահատում ԵՊՀ ԻՄ-ում ստացած Ձեր կրթությունը	**4,42**	4,43	3,70	4,65	4,63	4,71	4,60	4,39	4,64	4,32

Մասնաճյուղի առկա ուսուցման 164 շրջանավարտներից 20-ը պատրաստվում է շարունակել իր ուսումը, իսկ 140-ը՝ խորհուրդ կտա իր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ:



Կարծում ենք, որ պետք է ավանդույթ դառնա հարցումների արդյունքների հաշվառման և դրանց հիման վրա մասնաճյուղի տարբեր օղակների գործունեության վրա դրականորեն միջամտելու ցանկացած դրվագի լայնորեն իրազեկումը: Այն հաստատապես բարերար կանդրադառնա բարոյա-հոգեբանական մթնոլորտի վրա, ինչն ուսումնական առաջադիմության կարևոր գիտականորեն հիմնավորված գործոն է: Ավելին, այն գրեթե բացառելու է (չեզոքացնելու է) «կողքից անհիմն» կամ «կիսաճշմարտություն» շշուկների բացասական ազդեցությունը մասնաճյուղի հանրության տրամադրության վրա:

Շրջանավարտներն իրենց կարծիքներում բարձր են գնահատել ղեկավարության հոգատարությունը, պրոֆեսորադասախոսական կազմի պատշաճ մակարդակը, մասնաճյուղում ստացած իրենց որակյալ կրթությունը, այդ ամենի համար հայտնելով իրենց երախտագիտությունը:

Տպավորությունն ամբողջացնելու նպատակով մեջբերենք տարբեր ֆակուլտետների շրջանավարտների կարծիք-երախտագիտությունների նմուշներից.

-ուսումնառության տարիներին ես բացառապես ստացել եմ դրական ապրումներ…Մեր համալսարանում սովորելով ուսանողը դառնում է իր ընտրած մասնագիտության մասնագետը;

-հարգելի դասախոսներ, որպես շրջանավարտ ինձ իրավունք եմ վերապահում ասել. ներդրեք ձեր բոլոր ջանքերը, քանզի դուք շատ կարևոր գործի մասնակից եք;

-շնորհակալություն ղեկավարությանը և դասախոսական անձնակազմին այս 4 տարիների ընթացքում մեր կողքին լինելու և աջակցելու համար;

-շնորհակալ եմ իմ ստացած գիտելիքների և բարեհամբույր վերաբերմունքի համար;

-հատուկ շատ շնորհակալություն ամբողջ դասախոսական անձնակազմին, առաջին հերթին իրենց **մարդ տեսակի** և մարդկային վերաբերմունքի, իրենց տված գիտելիքների համար:

Ասվածը թույլ է տալիս կատարել որոշակի եզրահանգումներ.

- նախ, հարցման արդյունքները նախորդ տարիների նման քննարկել ֆակուլտետներում և ամբիոններում: Այն ամբիոններում, որտեղ ուսումնական գործընթացի առանձին բաղադրիչների գծով արտահայտվել են պակաս բավարարություն, դարձնել առանձին քննարկման ու վերլուծության առարկա, ինչը թույլ կտա հայտնաբերել վարչական ու բարոյահոգեբանական ռեսուրսներ՝ դրանց վերացման համար:

-ուսանող-շրջանավարտների կարծիքները դարձնել ընդհանուր իրազեկման նյութ, փնտրել դրանք հաշվի առնելու և կյանքի կոչելու մեխանիզմներ, ինչը մի հանգամանք է, որը դրական կանդրադառնա մասնաճյուղի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա, ինչպես նաև կմեծացնի նման հարցումների՝ որպես բուհի կառավարման գործոնի արդյունավետությունը:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին